

ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Մանրածախ բիզնեսի վարկային
ռիսկերի գնահատման բաժնի
Առաջատար մասնագետ

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

Օգոստոսի 02, 2022թ.

Օգոստոսի 16, 2022թ.

Անորոշ` 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Մանրածախ բիզնեսի վարկային ռիսկերի գնահատման բաժնի Առաջատար մասնագետ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մանրածախ վարկային հայտերի ուսումնասիրություն և վարկի տրամադրման վերաբերյալ կարծիքի ձևավորում,
- Մասնաճյուղերից ստացված մանրածախ վարկային հայտերի ամբողջականության ստուգում, անհրաժեշտության դեպքում ներկայացում լրամշակման,
- Մասնակցություն համապատասխան մանրածախ վարկային հայտերի հաստատման գործընթացին՝ ըստ Բանկի ներքին իրավական ակտերի,
- Ավտոմատացված համակարգերով վերանայման /վերջնական հաստատման/ եկած վարկային հայտերի դիտարկում,
- Մասնակցություն բաժնի կողմից կազմվող ընթացակարգերի և կարգերի կազմման գործընթացին, առաջարկների ներկայացում,
- Անմիջական/ֆունկցիոնալ ղեկավարի կողմից այլ հատուկ հանձնարարականներ,
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձ բանկային ոլորտում
- Ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն /գրավոր և բանավոր/
- Համակարգչային գիտելիքներ
- Բանկային պրոդյուկտների և ծառայությունների իմացություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Արագ կողմնորոշվելու ունակություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն

- Հաղորդակցման հմտություններ
- Կազմակերպչական հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- ճշտապահություն և պատասխանատվության զգացում
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրական ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այդի Բանկ» ՓԲԸ անվանումով:

«Այդի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ <https://www.idbank.am/>: